ԻՆՉՈՒ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է

1.

ՀՅ Դաշնակցությունն ամենափորձառու հայ քաղաքական կազմակերպությունն է

Ստեղծվելով 19-րդ դարի վերջին՝ 21-րդ դարում կուսակցությունը շարունակում է գործունեությունը: Այսօր ամենակարևորը քաղաքական փորձառությունն է, և Դաշնակցությունն ունի թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ պայմաններում, թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում հասարակական կյանքը արդյունավետ ու համերաշխ կազմակերպելու և ղեկավարելու փորձ: Նա չի ծնվել ընտրարշավների արդյունքում և չի վերանա մինչև իր նպատակների իրականացումը:

Դաշնակցությունը համոզված է, որ մեր երկրի քաղաքական համակարգը պետք է լինի կայուն, չպետք է ստեղծվեն «անձնական օգտագործման» կուսակցություններ, հորինվեն զանազան կազմավորումներ, որոնք գործիչների անձնական հավակնությունների արդյունք են և ունեն թիթեռի կյանք: Հայաստանը պետք է ունենա մեր հասարակության քաղաքական միտքն ու ձգտումներն արտացոլող մի քանի ուժեղ, կայուն, սկզբունքների ու ծրագրերի վրա հիմնված քաղաքական կուսակցություններ, որոնք կվայելեն հասարակության հարգանքն ու վստահությունը:

2.

ՀՅ Դաշնակցության պատմությունը անբաժան է իրեն ծնող ժողովրդի պատմությունից

Արդեն 117 տարի է՝ չկա Հայոց պատմության շատ թե քիչ կարևորություն ունեցող որևէ իրադարձություն, որում Դաշնակցությունը դերակատարություն չունենա: Դաշնակցությունն առաջնորդել է Հայ ազգային-ազատագրական պայքարը, Դաշնակցությունը կերտել ու ղեկավարել է Հայոց առաջին Անկախ հանրապետությունը, Դաշնակցությունը կազմակերպել է հայապահպանությունը Սփյուռքում, Դաշնակցությունն անմնացորդ մասնակցություն է ունեցել Արցախյան ազատամարտում, եղել է ապազգային ու պարտվողական քաղաքականության ամենաակտիվ ընդդիմախոսը: Դաշնակցությունն իր դիրքորոշումներով մի քանի անգամ փակուղային վիճակներից դուրս է բերել ՀՀ քաղաքական դաշտը և կենդանի գործի օրինակներով սերմանել ազգային ու քաղաքական համաձայնության գաղափարները: Դաշնակցությունն այսօր ևս ՀՀ զարգացման, անվտանգության ու կայունության ամենալուրջ երաշխավորներից է:

Պատմությունը կերտվում է նաև այսօր, հետևաբար գործել քաղաքական դաշտում՝ նշանակում է պատասխանատվություն կրել և՛ արվածի, և՛ չարվածի համար: Դաշնակցությունը ձգտելու է, որ Հայաստանի պետական ու քաղաքական համակարգը ամբողջությամբ աշխատի պատասխանատվության բարձր գիտակցությամբ: Ձգտելու է, որ գնահատվեն նրանք, ովքեր գիտեն աշխատել, և պատժվեն նրանք, ովքեր տապալում են ոլորտներն ու խախտում օրենքները:

3.

ՀՅ Դաշնակցությունը ամենասկզբունքային քաղաքական ուժն է

Թե՛ ընդդիմություն, թե՛ իշխանություն եղած ժամանակ կուսակցությունը երբևէ չի շեղվել իր արժեքներից, սկզբունքներից ու գաղափարներից: Այդ իսկ պատճառով թե՛ ընդդիմություն եղած ժամանակ, թե՛ այսօր Դաշնակցության քայլերն ու առաջարկները միտված են եղել բացառապես ժողովրդի բարեկեցության բարձրացմանն ու պետության հզորացմանը:

Անցումային փուլում գտնվող բոլոր պետություններում բարեփոխումների տրամաբանությունը և օրախնդիր հոգսերը ստիպում են քաղաքական ուժերին՝ հաճախ շրջանցել իրենց քաղաքական դիրքորոշումները կամ հրաժարվել դրանցից: Աջերը դառնում են ձախեր, պահպանողականները՝ ազատականներ, ոմանք էլ

իրենց հռչակում են կենտրոնամետ և այլն: Նույնը կատարվեց նաև մեր իրականության մեջ, սակայն առավել ծայրահեղ ձևերով: Դաշնակցությունն իր գործունեությամբ և օրինակով շարունակելու է ապացուցել, որ քաղաքական հարմարվողականությունը մերժելի է բոլոր առումներով: Հանուն մասնավոր շահի ու դիրքերի՝ չպետք է ոտնահարվեն գաղափարներ ու սկզբունքներ, որպեսզի նոր եկող սերունդը կրթվի ու դաստիարակվի արժեքային կուռ հիմքի վրա, որպեսզի երկրում վերջապես արմատավորվի քաղաքական մշակույթ:

Դաշնակցությունը ձգտելու է, որ քաղաքական պատասխանատվությունը դառնա կյանքի պարտադիր կանոն բոլոր քաղաքական ուժերի և գործիչների համար:

4.

ՀՅ Դաշնակցությունը ներքին կարգապահությամբ, ամուր կառույցով, իր ծրագիրն ու կանոնագիրը առանձին անձանց կամքից վեր դասող կազմակերպություն է

ՀՅ Դաշնակցությունը միակ կոլեգիալ ղեկավարվող կուսակցությունն է հայ իրականության մեջ: Դաշնակցությունը բացառում է անձի պաշտամունքը և առաջնորդի կողմից ղեկավարվելու հավանականությունը:

Պատմության դառը փորձը ցույց է տալիս, որ մարդը սխալական է, անգամ եթե նա վառ անհատականություն է, ուժեղ քաղաքական առաջնորդ: Ժողովրդավարական սկզբունքներով և կոլեգիալ կառավարման մեխանիզմի ներդրմամբ շատ երկրներ հասան մեծ հաջողությունների և կատարելագործեցին իրենց վարչական համակարգը:

ՀՅ Դաշնակցությունն իր քաղաքական գործունեությամբ անելու է ամեն ինչ, որ մեր պետական համակարգը ևս զերծ մնա անձերի և առաջնորդների եսակենտրոն քայլերից ու քմահաճույքներից: Եվ այդ ամենը ձգտելու է ամրագրել օրենքներով ու որոշումներով:

5.

ՀՅ Դաշնակցությունը մեր երկրում ժողովրդավարությունը անշեղորեն խորացնելու և ամրապնդելու կողմնակիցն է

Ժողովրդավարության հանդեպ մեզանում առկա է երկու հակադիր դիրքորոշում. ոմանք արևմտյան արժեքային համակարգը համարում են սպառնալիք մեր ազգային ինքնությանը, ոմանք էլ համոզված են, որ այդ արժեքները պետք է ընդունել ամբողջությամբ և անվերապահորեն:

Սա, ըստ էության, արհեստական հակասություն է, իրականության սխալ գնահատման հետևանք: Դաշնակցությունը խորապես համոզված է, որ ազատ մարդը, ազատ հայը գերագույն արժեք է, իսկ իր մարդկային ու քաղաքացիական իրավունքները գիտակցող հասարակությունը այն նախապայմանն է, առանց որի չի կարող լինել տնտեսական զարգացում, սոցիալ-քաղաքական առաջընթաց: Ինտեգրվելով եվրոպական կառույցներին, ընդունելով համաշխարհային «խաղի կանոնները»՝ մենք առավել նպաստավոր դիրքեր կնվաճենք մեր պետության և ժողովրդի համար, քան եթե ընդդիմանանք դրանց ու մեկուսանանք:

Դաշնակցությունը շարունակելու է խորացնել ժողովրդավարությունը մեր երկրում այն հաստատ համոզմամբ, որ հենց ժողովրդավարական սկզբունքների և արժեքների կիրառմամբ է հնարավոր կատարելագործել մեր ազգային ու պետական համակարգը: Ազգային բարձր ինքնագիտակցությունը ի զորու է արևմտյան արժեքները լավագույնս ծառայեցնել կոնկրետ մարդու ու պետության շահերին: Այդպես վարվեցին նույն արևմտյան պետությունները, որոնք այսօր ունեն զարգացած տնտեսություն ու որակյալ քաղաքական համակարգ:

6.

ՀՅ Դաշնակցությունը, որպես ընկերվարական և ժողովրդավարական կուսակցություն, հետամուտ է սոցիալական արդարությանը

Առանց սոցիալական արդարության և այդ սկզբունքի ժողովրդավարական կանոնակարգման՝ մեծապես վտանգվելու են անկախ պետականությունը, տնտեսական զարգացումը, մշակութային վերելքը: Դաշնակցության համար սոցիալական արդարությունը կյանքի մյուս բնագավառներում արդարության հաստատման հիմքն է: Դրա վառ ապացույցն են իր ստանձնած նախարարություններում կատարած քայլերը արդարության ապահովման առումով: Դաշնակցությունը ԱՊՀ երկրների կուսակցություններից միակ կուսակցությունն է, որ Սոցիալիստական ինտերնացիոնալի լիիրավ անդամ է:

Ցավոք, քաղաքական ուժերը սոցիալական արդարության մասին առավելաբար հիշում են ընտրությունների նախօրեին, երբ իրենց քվեներ են պետք: Արդեն քանի տարի է՝ Դաշնակցությունն ահազանգում է, որ երկրի տնտեսական սխալ քաղաքականության պատճառով անասելի հզորացել են խոշոր կապիտալի մկանները, ինչի հետևանքով մանր ու միջին ձեռնարկությունները, պետական բյուջետային հատվածը գտնվում են մասնակի փակուղում: Ժամանակն է փոխել այդ ընթացքը և կանաչ ճանապարհ ապահովել մանր ու միջին ձեռնարկություններին: Ժամանակն է հրապարակավ ստանձնել բյուջետային

հատվածում աշխատող մարդկանց ու թոշակառուներին վճարվող աշխատավարձերի ու կենսաթոշակների շարունակական բարձրացման պատասխանատվությունը: Աշխատասեր և ձեռներեց հայը չպետք է աղքատ ապրի: Հայն այլևս չի կարող և չպետք է ապավինի միայն իր ծով համառությանը և շարունակի ոչնչից հաց քամել, դառը քրտինքով հայթայթել ապրուստը: Հայի աշխատասիրությանը և նախաձեռնող ոգուն կառուցվածք տվող և կյանքի կոչող խելամիտ համակարգ է պետք:

Դաշնակցությունը չի նահանջելու այս դիրքերից և ակտիվացնելու է իր ջանքերը՝ երկրում սոցիալական արդարություն հաստատելու ուղղությամբ:

7.

Ցանկացած անարդարության դեմ համարձակ պայքարը Դաշնակցության համար սկզբունքային նշանակություն ունի

Անկախ նրանից, թե ում կողմից և ում դեմ է իրականացվում անարդարությունը, այն միանշանակորեն մերժելի է Դաշնակցության համար: Եվ պատահական չէ, որ այդ անարդարությունների դեմ Դաշնակցությունը պայքարել է, երբ եղել է ընդդիմություն, պայքարել ու պայքարում է՝ լինելով իշխանության մաս:

Իր այս սկզբունքային վարքագծով Դաշնակցությունը ամենահամարձակ քաղաքական կազմակերպությունն է: Միակ քաղաքական ուժը, որ այս տարիներին բացահայտ և բարձրաձայն հանդես եկավ կոռուպցիայի, մենաշնորհների, հովանավորչության, արտոնյալ անձանց ու անպատժելիության երևույթների դեմ:

Սոցիալ-իրավական անարդարությունները խարխլում են մեր նոր կազմավորված պետական ու հասարակական համակարգի հիմքերը: Կրկին ու կրկին պնդում ենք, որ ազատ շուկան աշխատավորի շահագործում չէ, և մեր հետագա գործողությունները միտված են լինելու այն բանին, որ ցանկացած գործատու օրենքների ուժով ու հարկադրանքով իր շահույթներից պարտադիր ու շարունակաբար ավելացնի աշխատող մարդու աշխատավարձը:

Ունենալով սոցիալիստական կողմնորոշում՝ Դաշնակցությունը կրկին ասում է. «Սեփականության անհամաչափ բաշխումը դանդաղ գործող ական է՝ դրված մեր ազգային համերաշխության տակ»: Սոցիալական տարբեր շերտերի իրավունքների և շահերի հավասարակշռություն ստեղծելու ճանապարհով միայն հնարավոր կլինի ապահովել ազգի և պետության սոցիալական հիմքի ամրությունը և հասնել համազգային համերաշխության:

Ժամանակն է օրենքների ուժով ու հետևողական կիրառմամբ զսպել օլիգարխներին: Ժամանակն է կոռուպցիայի դեմ ծավալել իրական պայքար և կանխել մենաշնորհը, հովանավորչությունը, կրճատել ստվերային տնտեսությունը: Դաշնակցությունը տեսնում է այս խնդիրները լուծելու արդյունավետ ուղիները, որոնք չեն ապակայունացնի մեր սոցիալ-քաղաքական համակարգը, բայց վերջ կտան երկրում առկա տնտեսության անհամաչափ զարգացումներին և անպատժելիությանը:

8.

ՀՅ Դաշնակցությունը միակ հայ քաղաքական կազմակերպությունն է, որ գործում է հայության բոլոր հատվածներում

Դաշնակցությունը միակ հայ կազմակերպությունն է, որ գործում է Հայաստանի Հանրապետությունում, Արցախում, Ջավախքում, Սփյուռքի բոլոր գաղթօջախներում՝ տարաբնույթ պայմաններում: Նա գործում է այնպիսի երկրներում, որոնք համաշխարհային թատերաբեմում հաճախ մրցակիցներ, անգամ թշնամիներ են: Սա ևս մեկ վկայությունն է Դաշնակցության քաղաքական և կազմակերպական հասունության, փորձառության և հեղինակության:

Հավատարիմ իր կոչմանն ու առաքելությանը՝ Դաշնակցությունը Հայ Դատի լուծման պահանջատիրական պայքարում կատարելու է իր վճռորոշ դերը, ԼՂՀ-ի հարցում նպաստելու է խաղաղ բանակցային գործընթացին՝ հօգուտ արցախահայության լիարժեք ազգային ինքնորոշման:

Պայքարելով ամեն տեսակի կարծրատիպերի դեմ՝ սատարելու է ջավախահայությանը՝ նրա ազգային, կրթամշակութային, սոցիալ-տնտեսական իրավունքների ձեռքբերման և պահպանման գործում:

Առանց նվիրվածության և նպատակասլաց քայլերի՝ հնարավոր չէր հեղինակություն դառնալ տարբեր քաղաքական ու կրոնամշակութային գոտիներում ապրող հայության համար և Սփյուռքի հայկական գաղութները զերծ պահել տեղական ու գլոբալ նշանակության ցնցումներից: Դժվար է, բայց ոչ անհնարին, եթե առաջնորդվում ես ազգային բեկորները պահպանելու մեծ հրամայականով:

Տասնամյակների տքնաջան աշխատանքի և փորձառության շնորհիվ Դաշնակցությունը հասել է այն բանին, որ կարող է ոչ միայն տեր ու ապավեն լինել հայկական Սփյուռքին, այլև սփյուռքահայության

հնարավորություններն ուղղորդել դեպի Հայաստան:

Հեռու չէ այն օրը, երբ Հայաստան-Սփյուռք բազմաբնույթ կապերը կզարգանան և կընդլայնվեն այնքան, որ աշխարհի բովանդակ հայության սիրտը կբաբախի միաժամանակ, և ազգը կդառնա մեկ օրգանիզմ, մեկ մարմին ու հոգի: Դաշնակցությունն անելու է ամեն ինչ, որ Հայոց պետության հանդեպ սիրով ու պատասխանատվության զգացումով տոգորվի ողջ սփյուռքահայությունը, և ազգային տուրքի գաղափարը տիրապետող դառնա ամենուր: Դաշնակցությունն անելու է ամեն ինչ, որ Հայաստանի Հանրապետությունը անմիջական պատասխանատվություն կրի բոլոր գաղթօջախների և յուրաքանչյուր հայի ճակատագրի համար: Ստեղծվել են նախադրյալներ հայությանը միավորելու համար, և Դաշնակցությունը Սփյուռքի մյուս շահագրգիռ ուժերի հետ կշարունակի այս առաքելությունը:

9.

ՀՅ Դաշնակցությունը հեղինակություն ունի համաշխարհային քաղաքական բեմերում

Դաշնակցությունն այն հեղինակավոր ուժն է, առանց որի տեսակետները հաշվի առնելու՝ տեղի չի ունենում ազգային նշանակության որևէ լուրջ քայլ: Դաշնակցությունից վախենում են մեր ազգի հակառակորդները, Դաշնակցությանը հարգում են մեր ազգի բարեկամները:

Հարգում են, որովհետև Դաշնակցությունն ունի ընդգծված ազգային գիտակցություն, հավատում է իր ժողովրդի կարողություններին և կազմակերպված է: Վախենում են, որովհետև մարտունակ է, վճռական ու նպատակասլաց: Այդպիսին Դաշնակցությանը դարձրեց ազգային շահի խորքային գիտակցումը, հայրենիքի ազատագրության և միավորման վեհ գաղափարը:

Գերտերությունների անզիջում մրցակցության և տարբեր երկրների ներպետական ամենատարբեր գործընթացների պայմաններում Դաշնակցության քաղաքական միտքը և գործողություններն ունեն նույն սևեռումը՝ կորզել առավելագույն արդյունք հայության համար: Որևէ երկրում որևէ հարցում համագործակցելն ու հակադրվելը, աջակցելն ու մերժելը, պաշտպանելն ու ընդվզելը Դաշնակցության համար չի եղել ինքնանպատակ և կամ սոսկ տեղական նշանակության հարց: Այդ ամենի խորքում Դաշնակցությունը տեսնում է այն մեծ ծրագիրն ու խնդիրները, որոնք կտանեն մեր նպատակների իրականացմանը:

10.

ՀՅ Դաշնակցության քայլերի ետևում կա հավատ ու վճռականություն

Ցանկացած քայլ, որոշում, առաջարկ, որով հանդես է գալիս Դաշնակցությունը, կատարվում է հավատով ու համոզմունքով: Դաշնակցությունը երբեք հանդես չի եկել հենց այնպես՝ ամբոխավարությանը կամ պահի կոնյունկտուրային տուրք տալով: Ընդհակառակը՝ Դաշնակցության բոլոր քայլերը բխում են դրանց արդարացիության և անհրաժեշտության հանդեպ վստահությունից ու կատարվող քայլի արդյունավետության հանդեպ հավատից:

Քաղաքագետներն ասում են. «Ընտրություններում քվեարկությունը չի որոշում իրադարձությունների ընթացքը, քվեարկությունը որոշում է, թե ով է որոշելու իրադարձությունների ընթացքը...»:

Մեր հասարակության քաղաքական հասունությունը այսօր արդեն թույլ է տալիս, ի մի բերելով նախորդ տարիների դառը փորձը, լրջորեն գնահատել սեփական ձայնի արժեքը, համարձակորեն մերժել «ով էլ լինի՝ նույնն է լինելու....» արատավոր մտայնությունը և հավատալ, որ իրոք կարելի է անել այնպես, որ այսուհետև «ով էլ լինի՝ այսպես չլինի»:

Պետք է հավատալ, որ Հայաստանում կարող է կազմավորվել պետական ու քաղաքական որակյալ վերնախավ, պրոֆեսիոնալ օրենսդիր մարմին: Այնպիսի բարոյական ու պրոֆեսիոնալ խորհրդարան, որը կկարողանա զերծ մնալ անձնական ու խմբային շահերով ապրելու գայթակղությունից և իրեն կդրսևորի իբրեւ ազգային ու պետական հոգսերով մտահոգ, ժողովրդի վստահությունը վայելող օրենսդիր իշխանություն:

Եկել է ժամանակը՝ կարգի բերելու մեր երկրի պետական համակարգը, սրբագրելու անցյալի սխալները և մեր ու մեր երեխաների համար ստեղծելու զարգացման կայուն և հուսալի հեռանկար:

Այս գործում Դաշնակցությունը ասելիք և անելիք ունի:

Վստահե՛ք նրան:

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ

ՀԻՆ ԸՆԿԵՐ

Մեր երկիրն է, պատիվն է մերը,
Մեզ միացնում են հավատն ու սերը,
Մեր նպատակը արդարությունն է,
Մեր հին ընկերը Դաշնակցությունն է:

Մենք մեր ապագան քեզ վստահել,
Նույն դժվար ճամփան քեզ հետ անցել,
Քո կողքին կանգնել,
Քեզ հավատացել,
Մենք քեզ հետ վստահ ենք մեզ զգացել:

Աջից-ձախից եկել են շատ-շատերը,
Սուտ խոստումներ տվել, փոխել իրենց գույները,
Մեզ միացնողը եղբայրությունն է,
Մեր հին ընկերը Դաշնակցությունն է:

Կրկներգ

Մեր հայրենիքն է մեր միակ բույնը,
Ուր էլ գնանք՝ մենք մնում ենք նույնը,
Մեր միությունը հզորություն է,
Մեր հին ընկերը Դաշնակցությունն է:

Կրկներգ

Մայիս 2007

Հեղինակ՝ **Ռուբեն Հախվերդյան**

Տպագրված է **Տիգրան Մեծ** հրատարակչության տպարանում
Տպաքանակը՝ 10 000 օրինակ

Ձևավորում՝ **Սամվել Փարթամյան**
Լուսանկար՝ **ՀակԲեր**